

744 H8-23 33



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ա. — ՇՐՋԱՆ ԻԱ.

1889

ՏԱՐԻ ԻՐ. ՅՈՒՆԿԱՐ 31


ԿՐՕՆԱԿԱՆ



ՆՈՐ ՏԱՐԻ.

« Յայց ամբը ինձ ՏԵՐ. իմ վերջն ու իմ
օրերիս թիւն սրբան է. որ իմանամ թէ,
սրբաբն բան է պապասեւ ինձանից . »

Մի վարմանաք, ով սիրելի ունկնդիրք, որ այս աղօթական
բացագանչուլթիւնով եմ սկսում այսօր իմ խօսքս, այսօր, երբ
որ շնորհաւարում ենք միմեանց նոր տարին, և ցանկանում ենք
միմեանց ուրախ սրտով նոր տարի և նոր բազմաւորութիւն:



Ո՞վ արդեօք մեղանից կարող է վստահ լինել թէ՛ իւր բարեմաղթութեան ողջոյնն ներգործութիւն կունենայ իւր նման մարդու ապագայ վիճակի վերայ: Եւ ո՞վ է արդեօք, որ այդ բարեմաղթութիւնը համարում է և ընդունում իբրեւ հաստատ և աներկբայելի երաշխաւորութիւն իւր ապագայ բաղդաւորութեանը: Մեղանից ոչ ոք չկայ, որ իւր օրերի թիւն իմանար ու կարողանար տեսնել իւր ապագայ մութ վիճակը: Տասն և երկու ամբողջ ամիսներ կան մեր առաջն, որ պէտք է անցկացնենք, և մենք այդ ամիսների առաջը գնալով, չենք իմանում թէ՛ ի՞նչ են բերելու մեզ, տրամութիւն՝ թէ ուրախութիւն, բարեբաղդութիւն՝ թէ թշուառութիւն, կեանք՝ թէ մահ:

Սորա համար պէտք է՞ արդեօք, որ մենք այսօր, միմեանց փոխադարձաբար ողջունելու ժամանակ, բարձրացնենք մեր մտաւոր աչքը դէպի երկինք, և թագաւոր մարգարէի նման աղաղակենք հեզ ու խոնարհ սրտով. «Ա՜հ Տէր, ողջ կը մընանք արդեօք այս նոր սկսուող տարումն. առողջ և բաղդաւոր կլինի՞նք արդեօք այս նոր տարւոյս ընթացքումն: Բարեյապէս կլաւանանք արդեօք, ու կհասնենք հաւատքի ու Աստուծոյ Որդւոյն ճանաչելու միաբանութեանը, կատարեալ մարդ լինելու և Քրիստոսի լրման հասակի չափն ունենալու:

Այսպէս, սիրելի ունկնդիրք, այսօրուայ բարեմաղթութիւնները կարող են մեր սրտին մխիթարութիւն տալ, բայց չեն կարող մեզ միամտացնել, որ մեր ունեցած յոյսերը հաստատ են: Երկնաւոր Տէրը պարգեւել է մեզ կեանք, Նորանիցն է կախուած և մեր կեանքի շարունակութիւնն: Նա է միայն աղբիւրն ամենայն բարեաց, և Նորանից միայն խնդրենք և յոյս ունենանք ընդունել նորանոր ողորմութիւններ ու շնորհներ:

Մի կարծէք թէ՛ մտնելով նոր տարիս, հեռացանք մեր մահից: Ո՛չ.—մենք աւելի ևս մօտեցանք այն օրհասական լուպէին, որ մեր ունեցած բոլոր կեանքի խիստ հաշիւը կպահանջեն: Այն ժամանակն, որ գրուած է մեզ յաւիտեական կեանքի համար պատրաստուելու, ոչ թէ աւելացաւ, այլ կարճացաւ: Ի՞նչպէս ուրեմն չաղաղակենք Դաւիթ մարգարէի հետ թէ՛ «Ա՜հ Տէր, ո՞վ է Դէր Դէրը» — Դէր օրերի ինչն որքան է, որ իմանանք, թէ մենք

տկար ու չնչին արարածներ ենք:

Բայց ժամանակն, որ պարգևւում է մեզ նոր տարումս, կանցնի նոյնպէս շուտ և սրնթաց, ինչպէս որ անցաւ այն ժամանակն, որ պարգևուած էր մեզ անցեալ տարումն էլ: Ինչպէս որ անց կացած ժամանակը մեզ չէր սպասում թէ՛ պատրաստ էինք արդեօք իրանից օգուտ քաղելու, թէ՛ անպատրաստ. այժմ էլ չի սպասիլ մեզ: Ուրեմն նուիրենք տարւոյս առաջին օրուայ մի քանի բոպէն մտածելու թէ՛ որչափ մեծ կշիռ ունի մարդուս համար ժամանակն:

Եթէ ամեն մի բան գնահատուիւմ է իւր ունեցած երեք տեսակ գլխաւոր յարգելի պատճառներով՝ այն աւելի մեծ օգուտներովն, որ իրանից կայ անկասկած, այն անհրաժեշտ և անփոփոխ պայմանովն, որ կարճ ժամանակ միայն կարող է մարդ իւր ձեռքումն ունենալ, և վերջապէս ամենայն յոյս կորցնելովն յետ բերելու իւր ձեռքն եղած ժամանակն, եթէ որ կորցնի. — ուրեմն այս ամեն յարգելի պատճառներով ամեն մի բանից աւելի գերազանց է մանաւանդ ժամանակն: որ մեզ պարգևւում է. ինչու որ յաւիտենական կեանքի գինն է, և այնչափ կարճ է, որ պէտք է շատ շտապել, որ կարողանանք օգուտիլ նորանից. վերջապէս անդառնալի ևս է, այնպէս որ՝ եթէ մի անգամ կորցրինք, այդ կորուստը այլ ևս ոչ մի բանով չի փոխարինուիլ:

Ժամանակը յա-իպենական կեանքի գինն է:

Աստուծոյ պատուիրանի դէմ մեղանչողը դատապարտուած է մահուան՝ հէնց իւր կեանքի սկզբում. և սորա համար պէտք էր, որ նա զրկուէր կեանքից հէնց իւր ծննդեան բոպէում: Բայց Յիսուսի Քրիստոսի արիւնը ջնջեց մահուան դատաւիճիւն, որ եղած էր քոլորիս վերայ առաջին մեղաւոր մարդու անձի մէջ: Մենք, թէև այն մահուան դատապարտուած հօր որդիքն ենք, ու նորա պատժի ժառանգներ, բայց իրաւունք ունինք ապրելու և կեանք ունենալու նորա՝ համար, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս իւր կեանքը զոհեց մեզ համար ու մեռաւ: Ուրեմն մեր օրերը, ժամերը և բոպէներն առաջին

բարերարութիւնն են, որ ստացել ենք Նորա իաչի արդիւնքով: Առաջին մարդու մեղքի վերայ աւելացնենք և այն պատուիրանազանցութիւններն, որ ինքներս էլ անում ենք մեր կեանքի մէջ: Քանի անգամ անց ենք կենում մեզ կեանք պարգեւողի պատուիրանից, քանի քանի անգամ արժանի ենք անում մեզ մահուան: Ինչպէս որ Դեղիք Ռուպը Ժաշ է. իբրեւ իւր՝ դէպի կորուստն գնալու ճանապարհի պաշարը: Բայց ամեն մի պատուիրանազանցութիւնից յետոյ, Աստուծոյ գթութիւնը, մի առ ժամանակ յետաձգելով մեր դատապարտութեան դատակնիքը, պարգեւում մեզ նոր կեանք, նորա համար, որպէս ղի միօրոց ունենանք փոխանակելու վատ գործածութիւնն այն ժամանակի, որ արդէն մերն էր, մեր մեղքի վերայ զլջալցել և մեր վարքն ուղղելով:

Զէք տեսնում արդեօք, սիրելի եղբարք, որ մեր կեանքն Աստուծոյ գթութեան անգին պարգեւն է: Զէք տեսնում, որ ժամանակը, Նորա դէպի մեզ մեղաւորներին վերայ ունեցած անչափ գթութեան և ողորմութեան շարունակութիւնն է, որ մի չբկորուող թել է մեր բոլոր կեանքի ընթացքում: Սորանից յետոյ կարելի՞ է արդեօք անց կացնել ժամանակն անգործութիւնով ու փափուկ կեանքի ետեւից ընկնելով, առանց վիրաւորելու Նորա բարութիւնն, որ պարգեւում է մեզ ժամանակն ու ժամանակի մէջ կեանք: Կարելի՞ է արդեօք, որ մեզ պարգեւած անգին ժամանակն զոհ բերենք մեր անգոսնելի կրքերին, ու ազատ մնանք Աստուծոյ բարկութիւնից: Ո՛հ, այն ո՞վ է, որ ստանալով մի թանկագին պարգեւ, քցում է հրապարակի վերայ: Ո՞վ չի ցաւիլ ու ափսոսալ մեզ պարգեւած ժամանակին: Այն մարդն, որ կորցնում է ժամանակը միայն աշխարհային ունայն բաների ետեւից ընկնելով, նման է այն երկրագործին, որ սերմանելու ժամանակն անց է կացնում գինեւոններում և յետոյ ամբողջ տարին մնում է առանց հացի. նման է այն տնտեսին, որ ստանալով իւր տիրոջից նշանաւոր մի գումար կենաց պիտոյքներ գնուլ համար, շուայլում է իւր հաճոյքին, նման է այն որդուն, որ ընդունելով հօրից հարուստ կուլուածք այն պայմանով, որ հատուցանի պարտքերը, խաղում տանել է

տալիս մի տարուայ մէջ, պարտատէրերի սչ մէկին էլ պահոց-
նելով:

Ժամանակը կարճ է:

Ահա երկրորդ պատճառն՝ որ ստիպում է մեզ աւելի լաւ
զգալ ժամանակի թանկագին լինելը, ճշմարիտ է, ինչքան որ
ճանապարհը կարճ է, այնքան էլ դէպի ամիս մօտ է. և ինչքան
որ ժամանակը շուտ է անց կենում, այնքան էլ մօտենում է
յաւիտենական կեանքին, բայց ինչո՞վ դուրս գանք ամիս՝ որ
ոչինչ չենք ձեռք բերել մեր արած շատ ճանապարհորդութիւ-
նից: Ի՞նչպէս երևենք յաւիտենական կեանքումն, որ կորցրել
ենք մեր բոլոր ընդունակութիւններն, և ի դուր վտանել ենք
մեր ժամանակը միայն ղգայական վայելչութիւնների մէջ: Այն-
տեղ չենք կարող ասել թէ՛՝ ոյժ չունէինք, կամ՝ ժամանակ չու-
նէինք, այնտեղ դատաստանը կարճ է. մեր մարդկային դատաս-
տանը չէ, այլ Աստուծոյ:

Ժամանակը թռչում անցնում է, բայց Աստուծոյ օրէն-
քը ուշ է զարգանում մարդուս սրտում: Մեր կեանքն այն-
պէս կարճ է, ինչպէս որ վայրի ծաղկինը, որ առաւօտը
ծաղկում է, իսկ երեկոյեան չորանում. իսկ Աստուծոյ պա-
տուիրանը շատ ընդարձակ է: Սորա համար պէտք չէ՞ արդեօք դո-
ղալ մեր կենաց իւրաքանչիւր ժամի վերայ, որպէս Վի անկա-
տար չթողնենք Տիրոջ պատուերների որ և իցէ կէտը: Պէտք չէ՞
արդեօք խնդրենք Տիրոջ մեր կենաց տարիքը բազմապատկե-
լու, որ կատարենք գոնէ մի մասը Աստուծոյ պատուերների:

Բայց այն փոքր ժամանակից, որ պարգեւուած է մեզ, իբրեւ
փրկութեան միջոց, պէտք է մաս հանենք մեր կեանքի պիտոյք-
ների, հասարակական գործերի և ընկերական պարտաւորու-
թիւնների համար, — էլ ի՞նչ կմնայ Աստուծոյ, յաւիտենական
կեանքի և հէնց մեզ համար: Ուրեմն այսպիսի դէպքում պէտք
է կատարել կենսական պիտոյքներն էլ, քաղաքական գործերն
էլ, ընկերական պարտաւորութիւններն էլ, որտի մաքուր դըր-
դումով, քրիստոնէական հոգւով՝ ուրիշների մխիթարութեան,
շինութեան և Աստուծոյ փառաց համար: Ուրեմն ի՞նչ «պելոս»

լինի, ինչիւն- լինի և ինչիւն որ էլ աշխարհ- լինի, աշխարհ
Աստուծոյ Կառման համար աշխարհը եւ այսպէս, չնայելով մեր կեանքի
կործութեանը, ժամանակ շատ կգտնենք բարի գործեր անելու,
և չենք կորցնիլ ոչ մի րոպէ անօգուտ կերպով:

Բայց կան մարդիկ, որոնք ձանձրանում են ու նեղանում
ժամանակի երկարատե լինելուց, չիմանալով թէ՛ ինչ անեն և
ինչով դադարեցնեն իրանք իրանց: Այդ ողորմելիներ, ամեն բան
կարողացած անել արդեօք, ինչ որ պէտք էր: Աւարտեցի՞ք ար-
դեօք ընտանեկան գործերը: Կատարեցի՞ք արդեօք հասարակա-
կան գործերը: Սորվեցի՞ք արդեօք Աստուծոյ օրէնքը: Պարապե-
ցի՞ք արդեօք աղօթելով: Եղա՞ք արդեօք ծիրոյ տաճարում: Այ-
ցեղեցի՞ք արդեօք հիւանդներին: Միխթարեցի՞ք արդեօք վշտա-
ցեալներին: Ժամանակը շատ կարճ է, իսկ քրիստոնէական
պարտականութիւններն՝ անթիւ, անհամար, ինչպէս կարելի է
ուրիմն ձանձրանալ ու նեղանալ ժամանակի երկարատե լի-
նելուց:

Ժամանակն անբաւարար է:

Երբոր հարստութիւնը, պատիւ ու փառքը կորած են լի-
նում, այն ժամանակ մնում է դեռ ևս մի յոյս կրկին ձեռք
բերելու այս ամենը, կամ փոխարինելու այս կորուստներից
ամեն մէկն ուրիշ կերպով: Բայց երբոր կորած է ժամանակն,
անց է կացրած անգործութիւնով, ու վատնուած է զուարճու-
թիւններով և ուրախութիւններով, այն ժամանակ ոչ մի կորած
րոպէն յետ բերել կարելի չէ: Ժամանակն թանկագին է աշ-
խարհումն եղած ամեն բաններից. ինչու որ նորանով ամեն բան
ձեռք բերել կարելի է, բայց նորան ոչ մի բանով ձեռք բերել կա-
րելի չէ: Այսպէս, ով որ անց է կացրել իւր պատանդութեան
օրերն անհոգութիւնով և անփութութիւնով, նա կարող է նո-
րոգել նոյնը այրութեան հասուն տարիքի մէջ, բայց պատանդ-
ութեան տարիքը յետ բերել անհնարին է: Կամ ով որ անց է
կացրել իւր մի քանի օրերը կորստաբեր զուարճութիւնների,
բարոյապէս գլուխ բռնող, ու շշմեցնող հոտի մէջ, կարող է
կրկին ընկնել նոյն անմտութեան մէջ. բայց օրերը յետ բերել չէ

կարող: Իսկ երբոր կորած են օրերը, նորա հետ միասին կորած է և Աստուծոյ ողորմութիւնը, որովհետեւ ժամանակն Աստուծոյ շնորհաց պարգեւն է: Բայց այս պարգևը կորցնելը, կամ ի չարն գործածելը, դժբաղդութիւն է, և անդարմանելի՛ դժբաղդութիւն:

Վեանքի իւրաքանչիւր բոպէն պէտք է լինի այնպէս, ինչպէս որ մահուան բոպէն: Մենք մի անգամ ենք մեռնում, և սորա համար պէտք է մեռնել լաւ կերպով, բարի մահուամբ, ինչու որ չկայ արդէն ոչ մի հնարք մեր կեանքը յետ բերելու, կամ փոխելու առաջին վատ վարքով ու գործերով ունեցած դժբաղդմահն՝ երկրորդ աւելի լաւ մահուան հետ: Վեանքի իւրաքանչիւր բոպէն անցնում է միանգամ. և սորա համար արդէն անկարելի է յետ բերել նոյն կերպով, ինչպէս որ անցել է. եթէ նորից էլ սկսենք մեր ճանապարհը, դարձեալ չենք ուղղիլ արդէն մեր առաջուայ ընթացքի մէջ արած մեր սխալները: Այդ մեր գործած յանցանքները կ'մնան մեզ մօտ, և այն բոպէներն, որոնց մէջ մենք արել էինք այն յանցանքն, արդէն ընկան, անյայտացան անվերջ ժամանակի անտակ ովկիանոսի մէջ:

Ո՛վ քրիստոնեայ, ժամանակի գինն իմանալով, մի կորցնիլ ոչ օրդ, ոչ ժամդ, և ոչ էլ բոպէ: Աշխատիր, ջան ու ճիգ դիր միշտ յառաջ գնալու մտածմունքներովդ ու զգացմունքներովդ՝ և արգիւնաւոր լինելու քո հաւատոյ և կոչման գործերի մէջ: Դու յետաձգում ես ու թողնում քո ուղղուելիք ապագայ ժամանակին. բայց ներկայ ժամանակդ ի՞նչ գործի պիտի բանեցնես: Դու գիտաւորութիւն ունիս այսուհետեւ առաքինի լինիլ. բայց մոլութեան ետեւից ընկնելու սովորած լինելդ քեզ արդեօք անընդունակ չի՞ անիլ առաքինութեան հետեւելու: Դու ենթադրում ես անել այսուհետեւ մի որ և իցէ առտուածահաճոյ գործ. բայց ժամանակն էլ չե՞ս կորցնիլ արդեօք այդ բարի գործն անելու: Դու յետաձգում ես քո ձեռքիդ օգնութիւնը անբաղդին տեսած ժամանակդ. բայց չե՞ս կորցնում արդեօք և ապագայում նորան օգնելու գիպուածը: Դու թողնում ես քեզ յանձնած գործերի կատարումը հետեւեալ օրուան. բայց թողած գործերի կատարուելովը չե՞ն թողնվում արդեօք ընթա-

ցիկ գործերն էլ: Եւ այսպէս մի օրուայ կորուստը չէ լինում արդեօք կորուստ ըլլոր ապագայ օրերի: Սորա հետ միասին վտանհ ես արդեօք քո կենաց շարունակութեան վերայ, կենացդ, որ ամեն մի ժամ ենթակայ է մահուան: Պատճառ որ մարդոս օրերն, ինչպէս որ ասում է Դաւիթ մարգարէն, խոտի պէս են, ինչպէս դաւարի ծաղիկը. այնպէս կծաղկէ: Փշմէ նորա վերայ, ասին՝ ու զիայ, եւ զի երեսմանորա պէզը: Սորա համար մի յետաձգիր երբէք բարի գործդ ապագայ ժամանակին: Ժամանակը թռչում է սրընթաց եւ իւր սրընթացութիւնովն կարող է հետն առնել, տանել եւ քո բարի մտադրութիւններդ:

Վերջացնում եմ խօսքս Ս. Աւարքեալի խօսքովն. ասի որ ժամանակը մի քեռի է, բարի գործեր անելի: Մեզ համար, որ մոռնում ենք նոր տարիս, ահա այս խօսքերն լինին իրտու: Գիշերը կգայ, այն ժամանակը եւ ոչ մէկը չի կարող գործել, ասում է Փրկիչն մեր Յիսուս. Փրկիչ այս խօսքերը մեզ համար խթան լինին եւ դրդեն մեզ Աւարքեալ մեզ տուած այս խրատը միշտ մտքներումս պահելու ու մեր կեանքին մէջ մեր գործերով ցոյց տալու: որ մենք նորա խօսքից միշտ օգուտ ենք քաղել իմաստաբար:

Իսկ յաւիտեանց Թագաւորին, անեղծին, աներևոյնին, անխնային մեյն Աստուծոյ պապեւ եւ փառս յաւիտեանց յաւիտեանց. ամեն:

(Թարգմ. Գ. Տ. Յ.)

ԿԵԱՆՔԻ՝ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՀԱՄԱՁԱՅՆ ԶԼԻՆՆԼՈՒ

ԵՒ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ՀԱՇՅՑՆԵՆԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ի ԾՆՈՒՆԴԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ:

Վսեմ բաղդի արժանացան արեւելեան մագերը Բեթղեհէմում: Միլիօնաւոր հեթանոսների մէջ նրանք առաջինը եղան, որ ճանաչեցին եւ մեծարեցին Նորան, Որին սպասում էին այնչափ դարեր արդարները: Նահապեաններն ու մարգարէները ցանկանում էին տեսնել Նորան, որ տիեզերաց Թագաւորն էր եւ Վար-